ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
т. XXV, № 2, 1972

Ն. Գ. ԱՎԱԳՅԱՆ

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Կենսաբանականի և սոցիալականի փոխհարաբերության դիալեկտիկա-մատերիալիստական ըմբռնման հիմնական սկզբունքները մշակվել են մարքսիզմի կլասիկների, մասնավորապես Ֆ. Էնգելսի կողմից՝ անտրոպոգենեզի աշխատանքային տեսության և մատերիայի շարժման ձևերի փոխհարաբերության մասին նրա ուսմունքում։ Այդ ուսմունքը ելնում է մարդու մեջ կենսաբանականի և սոցիալականի անխզելի միասնությունից։ Համընդհանուր ճանաչում է գտել այն կարծիքը, որ մարդկային անհատը կարող է դիտվել ժառանգականության (կենսագործոն) և շրջապատող միջավայրի (աբիոտիկ, բիոտիկ և սոցիալական) արդյունք։ Այլ կերպ ասած, մարդը բնության և հասարակության արդյունք է, քանի որ հասարակությունն ինքը բնության հետ մարդու ավարտուն էական միասնություն է. (Կ. Մարքս)։ Ինչպես նշել է Ֆ. Էնգելսը, բնությունն ու պատմությունը երկու հիմնական տարրեր են այն միջավայրի, որում ընթանում է մեր կյանքը, աշխատանքը և հանգիստը։

Մարդը, որպես առանձին անհատ, որպես անձ, իրենից ներկայացնելով որոշակի կենսաբանական համակարգ, սոցիալական որոշակի համակարգի տարրն է հանդիսանում։ Մարդու բնության այդ երկակիությունն արտահայտելու համար գրականության մեջ, սովորաբար, օգտագործվում են երկու հասկացություններ՝ «օրգանիզմ» և «անհատ», որոնցից առաջինն արտացոլում է մարդու կենսաբանական բնույթը, իսկ երկրորդը՝ այն փաստը, որ առանձին մարդը հանդիսանում է այս կամ այն սոցիալական համակարգի (հասարակության) տարր, սոցիալական որոշակի ֆունկցիաների և հարաբերությունների կրողը։

Մարդու մեջ կենսաբանականը այն է, ինչ վերաբերում է նրա կենսագործունեությանը, ինչ նա ժառանգել է իր կենդանի նախորդներից և կապում է նրանց հետ։ Կենսաբանականին են վերաբերում մարդու բջիջներում, հյուսվածքներում, օրգաններում և ամբողջությամբ վերցրած օրգանիզմում տեղի ունեցող կենսապրոցեսները, նրանց ձևը, կառուցվածքը և ֆունկցիան, կազմավորման ու զարգացման օրինաչափությունները։ Մարդու կենսաբանական ոլորտին են պատկանում նաև ժառանգականության, փոփոխականության և սաղմնային զարգացման օրինաչափությունները, բջջային, ենթաբջջային և մոլեկուլյար մակարդակներում տեղի ունեցող պրոցեսները։

Սոցիալականը մարդու *մեջ այն է, ինչ կապված է նրա գիտակցության, առհասարակ նրա հոգեկան ֆունկցիայի հետ։ Սոցիալականը, սակայն, նույնական, հավասար չէ հոգեկանին. նրանց նույնությունը սահմանափակված է կոնկրետ անհատի շրջանակներով։ Կոնկրետ անհատից, նրա օրգանիզմից դուրս սոցիալականը միջմարդկային նյութական և հոգևոր հարաբերությունների ամբողջությունն է, հարաբերություններ, որոնք արտացոլվում են մարդու գիտակցության մեջ հասկացությունների ձևով։ Մարդու կենսաբանական առանձնահատկությունը կենդանիների համեմատությամբ կայանում է նրանում,*

որ նա կարող է կրել սոցիալական ֆունկցիա՝ մի կողմից գիտակցության ձեվով արտացոլել միջմարդկային սոցիալական զարգացման օրինաչափությունները, մյուս կողմից՝ մարդու աշխատանքային (ֆիզիկական և մտավոր) գործունեության կենսաբանական նախադրյալ և հիմք հանդիսանալ։

Այսպիսով, կենսաբանականն ու սոցիալականը մարդու մեջ հանդես են գալիս անխզելի միասնությամբ և շնորհիվ այդ միասնության՝ փոխներգործում են։ Սոցիալականի և կենսաբանականի փոխներգործության էությունը կայանում է նրանում, որ կենսաբանականը հանդիսանում է հիմք, նախադրյալ և հնարավորություն սոցիալական զարգացման համար, իսկ սոցիալականը, իրականանալով կենսաբանական որոշակի հիմքի վրա, ակտիվորեն ներգործում է կենսաբանականի վրա, «ծառայեցնելով» նրան յուր պահանջներին։ Այն ամենը, ինչով օժտված է մարդը և ինչով նա տարբերվում է կենդանիներից, արդյունք է նրա հասարակական զարգացման, ընդորում, դա վերաբերում է ոչ միայն նրան, ինչ մարդը ձեռք է բերել անհատական կյանքում, այլև նրան, ինչով նա ծնվում է։ Մանուկը լույս աշխարհ է գալիս արդեն որոշակի անատոմա-ֆիզիոլոգիական (ժառանգական) նախադրյալներով, հնարավորություններով, որոնք կուտակվել են նախորդ հազարամյակներում՝ որպես արդյունք նրա և միջավայրի փոխազդեցության շնորհիվ տեղի ունեցած զարգացման։ Նորածին մանկան մոտ նրա կենսաբանական կազմությունը հանդես է գալիս որպես միայն մարդանալու հնարավորություն, որը իրականություն է դառնում, այսինքն մանուկը մարդ է դառնում միայն որոշակի սոցիալական միջավայրում, իրեն նման էակների հետ փոխհարաբերության պայմաններում։

Որ մարդու սոցիալական զարգացման համար անհրաժեշտ են որոշակի «մարդկային» կենսաբանական նախադրյալներ, այդ մասին վկայում է Ն. Ն. Լոդիգինա-Կոտսի կողմից Իոնի երիտասարդ շիմպանզեին «դաստիարակելու» փորձը. Ն. Ն. Լոդիգինա-Կոտսը շիմպանզեին մեծացրել է իր փոքրիկ դստեր հետ ու թեպետև կապիկը կատարում էր մարդու աշխատանքին նման որոշ գործողություններ, սակայն այդպես էլ չկարողացավ յուրացնել աշխատանքային պրոցեսի տրամաբանությունը. նա մուրճով մեխին հարվածում էր անհարկի թույլ կամ ուժեղ, հաճախ մեխի կողքից։

Հասարակությունից դուրս մարդու կենսաբանական կառուցվածքները մընում են միայն որպես մարդանալու հնարավորություններ։ Հայտնի են դեպքեր, երբ դժբախտ հանգամանքների բերումով նորածին երեխաները ընկել են կենդանիների միջավայր և տարիների ընթացքում նույնիսկ ուղղահայաց քայլել չեն սովորել, չեն տիրապետել հոդաբաշխ խոսքին, արտահայտել են միայն ձայներ, ինչպես այն կենդանիները, որոնց միջավայրում նրանք մեծացել են։ Այդ երեխաների մտածողությունը եղել է ծայրահեղ պարզունակ։

Պետք է նշել, որ մարդու զարգացման տարբեր էտապներում փոխվում է կենսաբանականի և սոցիալականի փոխհարաբերության բնույթը, նրանց դերն ու նշանակությունը։ Մեր կարծիքով կենսաբանականի և սոցիալականի փոխհարաբերությունը մարդու մոտ տարբեր բնույթ ունի նրա կյանքի հետևյալ հիմնական շրջաններում. 1) ծնվելուց մինչև երկրորդ ազդանշանային համակարգի ձևավորվելը. 2) դրանից մինչև սեռական հասունացման շրջանը. 3) սեռական հասունության և լիարժեք աշխատանքային-հասարակական գործունեության շրջանում. 4) ծերության շրջանում։

Մարդու մասին գիտությունների կարևոր խնդիրներից մեկը պետք է լինի սոցիալ-կենսաբանական օրինաչափությունների բնույթի բացահայտումը մարդու զարգացման այդ չորս բեկումնային շրջաններում։

Մարդու մեջ կենսաբանականի և սոցիալականի փոխհարաբերության ճիշտ ըմբռնման համար մեթոդաբանական ուղեցույց է նաև մատերիայի շարժման ձևերի մասին Ֆ. Էնգելսի ուսմունքը։ Խոսելով շարժման տարբեր ձևերի փոխադարձ կապերի մասին և, մասնավորապես, բնութագրելով կենսաբանության հարաբերությունը քիմիայի և ֆիզիկայի նկատմամբ, Ֆ. Էնգելսը նշում է կենսաբանության առանձնահատկությունը. «Ֆիզիոլոգիան, հասկանալի է, կենդանի մարմնի ֆիզիկան է, և առանձնապես քիմիան, սակայն դրա հետ միասին այն դադարում է հատկապես քիմիա լինելուց մի կողմից նրա գործողության ոլորտը սահմանափակվում է, բայց մյուս կողմից այն, դրա հետ միասին, այստեղ բարձրացնում է մի որոշ ավելի բարձր աստիճանի»[1]։ Վերլուծելով շարժման ձևերի փոխհարաբերության հարցը, այնուհետև Ֆ. Էնգելսը գրում է, որ որոշակի իմաստով ֆիզիկան մոլեկուլների մեխանիկա է, քիմիան ատոմների ֆիզիկա, իսկ կենսաբանությունը՝ սպիտակուցների քիմիա[2], դրանով շեշտելով ինչպես անմիջական կառուցվածքային և գենետիկական կապի առկայությունը շարժման մեխանիկական, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական ձևերի միջև, այնպես էլ շարժման կենսաբանական ձևի յուրահատկությունը ֆիզիկականի, մանավանդ քիմիականի համեմատությամբ։ Կոպիտ մեթոդաբանական սխալ կլիներ շարունակել Էնգելսյան տրամաբանությունը և պնդել, թե սոցիոլոգիան էլ մարդկանց կենսաբանություն է։ Դա կլինի անթույլատրելի էքստրապոլիացիա, որի մասին հաճախ զգուշացրել է Ֆ. Էնգելսը։

Բանն այն է, որ կենսաբանականի և սոցիալականի փոխհարաբերության բնույթը սկզբունքորեն տարբերվում է կենսաբանականի և քիմիականի փոխհարաբերությունից։ Այդ տարբերությունը, ամենից առաջ, կայանում է նրանում, որ շարժման կենսաբանական և սոցիալական ձևերի միջև կառուցվածքային կապը բացակայում է, *ի տարբերություն քիմիականի և ֆիզիկականի հարաբերակցության, որոնք կենսաբանականի մեջ միմյանց հետ կապված են անմիջականորեն, առարկայական-կառուցվածքային կապակցություններով։ Կենսաբանականը անմիջականորեն չի մտնում սոցիալականի մեջ, ի տարբերություն, օրինակ, քիմիականի, որը կենսաբանականի մեջ մտնում է որպես նրա առարկայական բաղկացուցիչ տարր։ Մարդու օրգանիզմում սոցիալական հատուկ սուբստրատ չկա։ Մենք նշել ենք, որ սոցիալականը* անհատի շրջանակներում *վերաբերում է նրա գիտակցությանը, մտածողությանը և այլն, որոնք ունեն կենսաբանական (ֆիզիոլոգիական) հիմքեր, սակայն չեն հանգում նրանց, որ անհատից նրա օրգանիզմից դուրս սոցիալականը մարդկանց հասարակական (նյութական և հոգևոր) հարաբերությունների ամբողջությունն է,* օբյեկտիվորեն, մարդուց դուրս *գործող այն օրինաչափությունները, որոնք մարդկանց նյութական և հոգևոր գործունեության արդյունք են։*

Հասարակական համակարգի տարբ ճանդիսացող մարդ-անհատի օրգանիզմում տեղի ունեցող պրոցեսները բոլոր մակարդակներում էլ ունեն կենսաբանական բնույթ։ *Բոլորովին այլ բան է, որ մարդու մոտ էվոլյուցիոն զար-*

---

1 Ֆ. Էնգելս, *Բնության դիալեկտիկա, Երևան, էջ 1969։*
2 *Նույն տեղում, էջ 259։*

դացման բերումով նրանք ձեռք են բերել սոցիալական որոշակի ֆունկցիաներ՝ գիտակցություն կրելու ունակություն, ինչին ընդունակ չեն ամենաբարձր զարգացած կենդանիները։

Դա ընդունում են շատ հետազոտողներ, այդ թվում և Գ. Ի. Ցարեգորոդցևը, որը սակայն, հակասում է ինքն իրեն, երբ գրում է. «պետք է նկատի ունենալ, որ կենսական պրոցեսների (ֆիզիոլոգիական և պաթոլոգիական) զարգացման տարբեր մակարդակներում սոցիալականի և կենսաբանականի փոխհարաբերությունը դրսևորվում է տարբեր կերպ։ Ուսումնասիրության ընթացքում անցնելով ամբողջական օրգանիզմային մակարդակից համակարգային, համակարգայինից օրգանայինին, սրանից հյուսվածքայինին ու բջջայինին, վերջինս՝ ենթաբջջայինին ու կենսամոլեկուլյարին («վերից վար») նրկատվում է սոցիալականի և կենսաբանականի փոխհարաբերության փոփոխություն՝ սոցիալականի որոշակի «մարում», կենսաբանականի «աշխուժացում», ուժեղացում, և հակառակը»[4]։

Հասկանալի է, որ կարող է «մարել» միայն եղածը, մինչդեռ մարդու օրգանիզմում, նույնիսկ բարձրագույն ներվային գործունեության մակարդակում սոցիալական սուբստրատ չկա. կան միայն սոցիալական ֆունկցիա իրականացնող (գիտակցություն, խոսք, աշխատանք և այլն) կենսաբանական սուբստրատներ և դրանց կողմից իրագործվող ֆիզիոլոգիական օրինաչափություններ։

Կարևոր մեթոդաբանական նշանակություն ունի նաև այն էական տարբերության հաշվառումը, որ առկա է արտաքին միջավայրի հետ կենդանիների և մարդու փոխհարաբերության մեջ։ Այդ տարբերությունը կայանում է նրանում, որ բույսերն ու կենդանիները շրջապատող միջավայրին հարմարվում են կենսաբանորեն՝ օգտագործում են այն, ինչ պատրաստի վիճակում ընձեռում է նրանց բնությունը։ Հենց այդ հիմքի վրա էլ ընթանում է կենդանի համակարգերի էվոլյուցիան։ Փոփոխված պայմաններում ապրելու և զարգանալու համար կենդանու և բույսի օրգանիզմը միայն մի հնարավորություն ունի՝ ենթարկվել կենսաբանական (ոչ միայն ֆենոտիպային, այլև գենոտիպային) մորֆոֆիզիոլոգիական վերափոխումների։ Կենսաբանորեն չփոփոխվելու դեպքում կենդանու կամ բույսի օրգանիզմը կմահանա։ Ինչպես բույսերը, այնպես էլ բոլոր կենդանիները շրջապատի փոփոխվող պայմաններին կարող են հարմարվել միայն իրենց կառուցվածքներն ու ֆունկցիաները փոփոխելով, մինչդեռ մարդը դրա կարիքը չի զգում։ Միջավայրի պայմաններին մարդը հարմարվում է սոցիալականորեն. իր աշխատանքային գործունեությամբ վերափոխելով շրջապատը, հաճախ ստեղծելով յուր գոյության միջավայրը, նա հարմարեցնում է այն իր կենսաբանական և սոցիալական պահանջմունքներին, առանց էականորեն փոփոխելու յուր կենսաբանական կառուցվածքներն ու ֆունկցիաները։

Շրջապատող միջավայրին սոցիալականորեն հարմարվելու շնորհիվ հիմնականում ավարտվել է մարդու կենսաբանական էվոլյուցիան, նրա նկատմամբ դադարել է գործել բնական ընտրության օրենքը. մարդու զարգացման մեջ ավելի մեծ նշանակություն են ստացել սոցիալական գործոնները՝ ամենից

---

3 «Вопросы философии», II, 1970 г., стр. 83.

4 *Г. И. Царегородцев.* Проблема социального и биологического в медицине. М., 1965, стр. 46.

առաջ աշխատանքն ու նրա հետ կապված հարաբերությունները։ Մարդաբանների մեծ մասի կարծիքով, մարդն այլևս չի ենթարկվում գենոտիպա-տեսակային փոփոխության։ Իր գլխավոր և էական կողմերով մարդը միշտ մնում է Homo sapiens-ի շրջանակներում, չնայած տեսակի շրջանակներում կարող են տեղի ունենալ և ունենում են նշանակալից ֆենոտիպային փոփոխություններ (հասակի, կրծքավանդակի շրջանագծի, նորածինների միջին քաշի ու բոյի, ձևաբանական փոփոխություններ ներքին օրգաններում և այլն), ինչի մասին վկայում է մեր դարի հետաքրքիր երևույթներից մեկը՝ աբսելերացիայի պրոցեսը։ Դրա պատճառն այն է, որ մարդու իսկ կողմից ստեղծվող գոյության արհեստական պայմանները ավելի ու ավելի մեծ չափով են նրան պարսպում բնական ու սոցիալական միջավայրի անբարենպաստ գործոնների ներգործությունից։ Ավելի ու ավելի խորը ճանաչելով բնության ու սեփական զարգացման օրինաչափությունները, մարդը գիտակցորեն ձգտում է պահպանել իրեն որպես տեսակի, համարեցնելով պայմանները իր սոցիալական պահանջմունքներին և օրգանիզմի կենսաբանական հնարավորություններին։

Սակայն մարդուն ոչ միշտ է հաջողվում իր մեջ ներդաշնակել կենսաբանական և սոցիալական զարգացումը, նրա կողմից ստեղծված գոյության արհեստական պայմանները ոչ միշտ են անհիվանդագին, ուստի սոցիալական գործոնները և անցյալում և, մանավանդ, ներկայումս, նշանակալից տեղ են գրավում մարդու ախտաբանության ժամանակակից վիճակում, պատճառ դառնալով սիրտանոթային, ուռուցքային, նյարդա-հոգեկան և մի շարք այլ հիվանդությունների շատացման։ Դեռևս Ֆ. Էնգելսը գրում էր. «Հրապուրվենք, սակայն, բնության նկատմամբ մեր հաղթանակներով։ Ամեն մի հաղթանակի համար նա մեզնից վրեժխնդիր է լինում։ Այդ հաղթանակներից յուրաքանչյուրը, ճիշտ է, առաջին հերթին տալիս է այն, ինչ մենք նկատի ունենք, սակայն երկրորդ և երրորդ հերթին լինում են և միանգամայն այլ, չնախատեսված հետևանքներ, որոնք շատ հաճախ ոչնչացնում են առաջինների նշանակությունը»[5]։

Արտասահմանյան որոշ հեղինակներ (Է. Գյուան, Ա. Դյուսսեր, Ռ. Դյուբո և այլոք) այսպես կոչված սոցիալական դեզադապտացման իրենց տեսության մեջ մեր դարում որոշ հիվանդությունների շատացման պատճառը համարում են օրավուր խորացող հակասությունը մարդու կենսաբանական հնարավորությունների և նրա սոցիալական պայմանների զարգացման հարաճուն տեմպի միջև։ Նրանց կարծիքով, մարդու կենսաբանական հնարավորությունները, հաղարամյակներում ձևավորված կենսական ֆունկցիաները համեմատաբար կայուն և պահպանողական են, մինչդեռ սոցիալական զարգացման տեմպերը գնալով ավելի ու ավելի են մեծանում, դառնում անհամապատասխան մարդու կենսաբանական հնարավորություններին։ Քաղաքականության զարգացումը, այդ հեղինակների կարծիքով, ստեղծում է աննեղդաշնակություն մարդու կենսաբանական և սոցիալական զարգացման ռիթմերի միջև, որը և այսպես կոչված քաղաքակրթական հիվանդությունների պատճառ է։

Սոցիալական դեզադապտացման այս տեսությունը, սակայն, իր մեջ ունենալով որոշ ռացիոնալ հատիկ, մեթոդաբանական տեսակետից սնանկ է, հիմնված մարդու մեջ սոցիալականի և կենսաբանականի հարաբերակցության

---

5 Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, Երևան, էջ 178, 1969։

սխալ ըմբռնման՝ կենսաբանականի դերի չափազանցման և մարդու սոցիալական էության անտեսման վրա։ Մենք արդեն նշել ենք, որ ի տարբերություն բոլոր կենդանիների, շրջապատող միջավայրին մարդը հարմարվում է ոչ թե կենսաբանորեն, այլ սոցիալականորեն, այսինքն, միջավայրի փոփոխվող պայմաններին մարդը հարմարվում է փոփոխելով ոչ թե իր կենսաբանական կազմակերպությունն ու ֆունկցիաները, այլ՝ աշխատանքային գործունեությամբ վերափոխելով այդ պայմանները և դրանք համապատասխանեցնելով իր կենսաբանական հնարավորություններին։ Մարդու և կենդանիների այս սկզբունքային տարբերությունն է, ահա, որ չեն հասկանում սոցիալական դեզադապտացման տեսության կողմնակիցները։ Այնուհետև, խոսելով «քաղաքակրթության հիվանդությունների» մասին, սոցիալական դեզադապտացման տեսության հեղինակները «քաղաքակրթություն» վերացական հասկացության օգտագործմամբ փորձում են վերացնել քաղաքակրթության դասակարգային բովանդակությունը, անտեսել ժամանակակից աշխարհում երկու՝ սոցիալիստական և բուրժուական քաղաքակրթությունների առկայությունը, որոնցում սկզբունքորեն տարբեր սոցիալական և առողջապահական հետևանքներ է առաջացնում արդի գիտա-տեխնիկական հեղափոխությունը։ Խորը քննության առնելով սոցիալական դեզադապտացման տեսությունը, պարզվում է, որ այն, ըստ էության, միասնական ինդուստրիալ հասարակության հակամարքսիստական տեսության տարբերակներից մեկն է։

Այսպիսով, մարդու մեջ կենսաբանականի և սոցիալականի փոխհարաբերության պրոբլեմը պատկանում է մարդու մասին գիտությունների կարևորագույն պրոբլեմների թվին և գիտա-տեխնիկական հեղափոխության մեր դարում հանդես գալով մեթոդաբանական յուրակերպ դոմինանտի դերում, կանխորոշում է ոչ միայն ընդհանուր մոտեցումը մարդու մասին ուսմունքի ընդհանուր պրոբլեմները լուծելիս, այլև սոցիալական, հոգեբանական, բժշկական և անտրոպոլոգիական առավել կոնկրետ հարցերը մեկնաբանելիս։

Հայկական սովետական
Հանրագիտարան

Ստացված է 7. V. 1971 թ.